№ 199 Նոյեմբերի 15 (27) 1879 Նոյեմբերի 15 (27) № 199

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչի չէ կարելի։—Ներքին տեսութիւն։ Նամակ Խարկովից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Temps» լրագիրը հայերի մասին։ Իտալիա։ Ամերիկա։ Զէրնօգորիա։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Հայ երիտասարդութիւնը։

ԻՆՉԻ ՉԷ ԿԱՐԵԼԻ

—

Թիֆլիսում հրատարակվող «Кавказъ» լրագիրը վերջապէս խնդիր բարձրացրեց կովկասեան համալսարանի մասին։ Այդ լրագրի 247-որդ համարի առաջնորդող յօդուածը նուիրված է այդ խնդրին։

Ռուս լրագիրը յիշելով նորերումս հրատարակված կովկասեան ուսումնարանական վիճակի շրջաբերականը, որի մէջ յայտնված է թէ կովկասեան միջնակարգ դպրոցներում աւարտողներից 42% պատկանում են ռուսաց ազգութեանը, 33% հայոց ազգութեանը, իսկ մնացած 25% բաժանվում է մեր երկրի բոլոր մնացած ազգութիւնների մէջ, դորանից հետևացնում է որ դեռ ևս անհնարին է մեր երկրի մէջ համալսարան հիմնելու, որովհետև մեր բոլոր գիմնազիաներից դուրս եկած աւարտողների տարեկան թիւը լինում է 45—50 հոգի։ Հայերը ռուսներից յետոյ անմիջապէս երկրորդ տեղն են բռնում, իսկ օրինակ միլիօնաւոր վրաց ազգաբնակութիւնը աւարտողների միայն 4% է տալիս, այնպէս որ 1879 թուին 120 աւարտողների մէջ միայն 1 բուն վրացի է եղել, 1 մինգրելցի և 2 իմերէր։ Մի և նոյն ընդհանուր թուի վրա թուրքերից 3 հոգի են եղել, լեռնականներից 5 հոգի, գերմանացիներից 5 հոգի, լեհացիներից 3 հոգի, և հրէաներից 4 հոգի։

«Մշակը» շատ անգամ խօսել է մեր երկրում համալսարան հիմնելու անհրաժեշտութեան մասին, քննելով այդ խնդիրը այլ և այլ տեսակէտներից։ Վերջապէս մեր լրագրի 178 համարի առաջնորդող յօդուածն էլ դարձեալ նուիրված էր այդ խնդրին։

Շատ ափսոս, որ «Кавказъ» լրագիրը, որ միայն մեր լրագրի մանր լուրերի կամ թղթակցութիւնների վրա է դարձնում իր ուշադրութիւնը, ինչպէս միշտ ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց «Մշակի» № 178 մէջ տպված առաջնորդող յօդուածի վրա։

«Кавказъ» անհնարին է համարում պահպանել մի համալսարան Կովկասում, աչքի առջև ունելով որ մեր համալսարանի ուսանողների թիւը 45—50 հոգուց բաղկացած կը լինի։ Ռուս թերթը աւելի յարմար է համարում հիմնել մեզանում միայն համալսարանական մի բաժին, այն է իրաւաբանական ֆակուլտէտը, կամ մինչև անգամ իրաւաբանական առանձին դպրոց, որի մէջ պէտք է ընդունվեն տեղական լեզուներին հմուտ երիտասարդներ, և այդ պատճառով կարծում է որ անհրաժեշտ է տեղական գլխաւոր լեզուների ուսումնասիրութիւնը պարտադիր դարձնել մեր միջնակարգ դպրոցներում։

Ձենք կարող ամբողջ սրտից չը համակրել մեր պաշտօնական թերթի կողմից տեղական լեզուների մասին յայտնած այդ տեսակ օգտակար մտքին, բայց կը համարձակվենք նկատել «Кавказъ» լրագրին, որ մենք «Մշակի» յիշված համարում առաջարկել էինք որ մեր ապագայ համալսարանի մէջն անգամ ուսումնական առարկաները աւանդվեին թէ ռուսերէն և թէ հայերէն լեզուով։ Այն ժամանակ բացի կովկասեան միջնակարգ դպրոցներում աւարտածներից, Թիֆլիսի համալսարանը կը լցվեր և Պարսկաստանից ու Թուրքիայից եկած հայ ուսանողներով։ Ուրեմն համալսարանը հիմնված չէր լինի միմիայն 45 մարդու համար։ Բացի սորանից, երբ Թիֆլիսում կը լինի մի համալսարան, բէալական դպրոցների մէջ աւարտողներն էլ, փոխանակ գընալ Ս. Պէտերբուրգի և Մոսկվայի այլ և այլ բարձրագոյն տեխնիկական դպրոցները, մեծ ուրախութեամբ կը պատրաստվեն և նորից քննութիւն տալով կլասիկային գիմնազիաներում, կը մտնեն կովկասեան համալսարան, միայն թէ չը գնան հեռու հիւսիս, ուր կլիման միշտ կորստաբեր ազդեցութիւն ունի մեր երիտասարդութեան վրա։ Ձը պէտք է մոռանանք և այն, որ մեր հոգևոր դպրոցներում աւարտածները միայն հոգևորականներ չեն դառնում։ Այսուամենայնիւ, ես կաշխատեմ իմ ընթերցողներին մօտաւորապէս ծանօթացնել այդ հասարակութեան հետ, որ համարվում է նոր սերունդի ներկայացուցիչը *)։

Հայ ուսանողները սովորում են մեծ մասամբ Ռուսաստանի համալսարաններում և ընտրում են գլխաւորապէս Ս. Պետերբուրգի և Մոսկվայի համալսարանները, իսկ փոքր թուով դիմում են արտասահման, Գերմանիա, Ֆրանսիա և Զվիցերիա։ Սկսենք առաջ Ռուսաստանի ուսանողների մասին։

Ես ի նկատի ունեմ երկու մայրաքաղաքների, այսինքն Ս. Պետերբուրգի և Մոսկվայի ուսանողներին։ Հայ ընտանիքի մէջ սեղմված և փոքրիկ դաւառական քաղաքներում դեռ աչքերը չը բացված երիտասարդը յանկարծ ընկնում է մեծ աշխարհի ծովի մէջ։ Ընկերները վարձում են նրա համար մի դահաւորած սենեակ, և նա սկզբում, կարծես, վախենում է դրսի լոյսից և պտրտվում է իր համազգիների նեղ շրջանի մէջ։ Բաւական պատրաստված չը լինելով կեանքի համար, նա իրան միշտ հեռու է պահում հասարակութենից. ռուս կամ օտարազգի ուսանողների հետ յարաբերութիւն չէ կազմում, նրանց ընտանիքների մէջ չէ մտնում, և հայ ընտանիքներից հաղիւ է պատահում, որ իրանց մօտ ուսանողներ ընդունէին, եթէ տանը հասած աղջիկ չունէին, որին դժուար էր մայրաքաղաքում գխարջել։ Երբեմն նա տեսնվում է հայ հասարակութեան հետ, երբ ազգասիրութիւնից դրդված, կիրակի կամ տօն օրերում հայոց եկեղեցի է գնում։ Եւ այսպէս ընականաբար կազմվում է հայ ուսանողների նեղ և սահմանափակ շրջանը, որ միշտ առանձնացած և անխառն է մնում օտար տարրերից։ Ոմանք մեր ազգասէրներից խիստ զոհացուցիչ են գտնում այդ դրութիւնը, մտածելով, թէ այսպէսով հայ ուսանողները պահպանում են իրանց հայութիւնը և չեն օտարանում։ Բայց իմ կարծիքով, կեանքի մէջ կուլ չը գնալու համար պէտք է մտնել նոյն իսկ կեանքի մէջ. որպէս ծովի մէջ չը խեղդվելու համար պէտք է անպատճառ ջրի մէջ մտնել և լողալ սովորել....

Այսպէս առանձնացած կեանք վարելով, իրանց նեղ հայկական շրջանից չը դուրս գալով, օտարազգի ուսանողներից և օտարազգի ընտանիքներից միշտ իրանց հեռու պահելով, — հայ ուսանողները, թէև պահպանում են իրանց ցեղական յատկութիւնները, բայց մի և նոյն ժամանակ չեն փոխում իրանց ընաւորութիւնը և իրանց վարքը, որ շատ կարօտ էին քաղաքակրթվելու։ Բացի դրանից, նրանք մտաւորապէս ևս չեն զարգանում։ Ուսանողը աւելի շատ բան սովորում է դրսի աշխարհից, քան թէ համալսարանի ամբիօնից։ Կեանքը—ահա մարդու գլխաւոր վարժարանը։ Ով որ իրան հեռու է պահում կեանքից, մնում է անկիրթ, անտաշ և վայրենի։ Դրանով կարելի է բացատրել հայ ուսանողների նեղ աշխարհահայեցութիւնը, որ միշտ սահմանափակված է մնում նախապաշարմունքների շրջանակի մէջ.

Ես յիշեցի հայկական ուսանողների հայկական շրջան և այլն, բայց իսկապէս այդ էլ չը կայ։ Ի՞նչ շրջան կարող է կազմվել հայ ուսանողների մէջ, քանի որ նրանց մէջ ոչինչ կապ չը կայ, քանի որ ոչ մի ընդհանուր միտք և ոչ մի ընդհանուր նպատակ չէ միացնում նրանց։ Նրանք միայն հայրենակցական և ազգակցական կապեր ունեն, և աւելի ոչինչ։ Հայ ուսանողը երբեմն հայ ընկերի մօտ է գնում, նրա հետ տեսնվում է, նրա հետ ժամանակ է անցկացնում, որովհետև մի ուրիշին չէ ճանաչում։ Իսկ նա իր ներքին կեանքի մէջ ևս բոլորովին առանձնացած է ապրում, առանց սերտ յարաբերութիւններ ունենալու նոյն իսկ իր ազգայինների հետ։ Կարճ ասեմ, նա իր բաւականութիւնները, իր զուարճութիւնները և իր զարգացումը գտնում է իր սենեակի չորս պատերի մէջ։ Բացառութիւնները խիստ աննշան են։

Կը բերեմ մի քանի պատկերներ նրանց կեանքից։

Մտնում ես ուսանողի սենեակը, այնտեղ կը տեսնես մի քանի աթոռներ, մահճակալ և գրասեղան, որի վրա մի թղթի կտոր անգամ չես գտնի գրելու համար։ Թանաքամանի մէջ միանգամ ածված մելանը վաղուց ցամաքել է։ Գրքեր չես տեսնի։ Գրասեղանի վրա դրած են մի քանի վիմագրութեամբ տպված տետրակներ միայն՝ դրանք պրոֆէսորի լեկցիաների տետրակներն են, որոնց վրա մի թիզ փոշի է նստած, երևի, ուսանողի ձեռքը վաղուց չէ դիպել նրանց։ Սենեակի մէջ աչքի են ընկնում կանացի պաճուճանքներ, ժապաւէնի կտորներ, երկայն գուլբաներ և այլն։ Դրանք ինչ են չինում այնտեղ։—Ուսանողը սիրուհու հետ է ապրում։

Եթէ տեսնենք, թէ ինչ տեսակ կնիկներ դեր են խաղում ուսանողների կեանքի մէջ, հասկանալի կը լինի նրանց քաղաքակրթութեան աստիճանը։ Մոսկվայում և Պետերբուրգում կայ մի ամբողջ դաս աղջիկների, որոնք կոչվում են սպիտակեղէնների կարուհիք (белошвейка). այդ ողորմելի ա՞րարածները մոդնի մագազինների գործաւորներ են, որոնք երբ ճանձրանում են աշխատութիւնից, մտնում են ուսանողի մենարանը զուարճանալու համար։ Մի կեղծ սէր կապում է ուսանողին այդ աղջիկների հետ, որոնք այնքան անգամ խաբված են երիտասարդներից, որ իրանք էլ այլ ևս չեն հաւատում սէրին։ Ուսանողը անդադար փոխում է նրանց, որպէս հնացած կօշիկներ։ Բայց լինում-են և այնպիսի մրամիտներ, որոնք խաբվելով երիտասարդներից, որ իրանք էլ այլ ևս չեն հաւատում սէրին։ Ուսանողը անդադար փոխում է նրանց, որպէս հնացած կօշիկներ։ Բայց լինում-են և այնպիսի մրամիտներ, որոնք

*) Ես իմ տեղեկութիւնները առհասարակ ուսանողական կեանքի մասին քաղել եմ զանազան գրքերից, իսկ ինչ որ վերաբերում է հայ ուսանողներին, այդ վերաստուգել եմ իմ բարեկամներից։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Գ.

Ուսանող երիտասարդութիւնը

—

Իսկապէս մենք չունենք այն տարրը, որ հասկացվում է բառերով ուսանող կամ ուսանողութիւն։ Ասելով գերմանական ուսանողութիւնը, ֆրանսիական ուսանողութիւնը, մենք իսկոյն ըմբռնում ենք մի միտք բոլորովին որոշ և կազմակերպված տիպերի մասին, որ յայտնի են իրանց դաղափարներով, ձգտումներով և յատկանիշ առանձնութիւններով։ Բայց հայ ուսանող ասելով, մենք հասկանում ենք միայն բարձր ուսում ստացած երիտասարդ, որ սովորել էր այս և այն համալսարանում—և աւելի ոչինչ։ Այդ տարրը մեզանում մի որոշ ձև չէ ստացել. նա դեռ իր քաոսական դրութեան մէջն է գտնվում։ Եւ շատ բնական է, որովհետև մի ազգ, որ սեպհական համալսարան չունի, և չի էլ կարող ունենալ իր յատուկ ուսանողութիւնը։ Գիտութիւնը, արդարև, համազգային սեպհականութիւն է, բայց ոչին, որ համալսարանի մթնոլորտը ներշնչում է ուսանողի մէջ և տալիս է նրա ընաւորութեանը մի որոշ գոյն,—դա առանձնական նշանակութիւն ունի։ Այդ պատճառով շատ դժուարին է ներկայացնել հայ ուսանողութիւնը որպէս մի կազմակերպված մարմին և նկարել նրա պատկերը իր ամբողջական ձևի մէջ, քանի որ նրանք ուսանում են զանազան պետութիւնների զանազան համալսարաններում։

պրոցներում աւարտողներից շատերը կը մտնեն համալսարան, այն ինչ այժմ նրանք զուրկ են մնում բարձրագոյն ուսումից, չը կարողանալով, դրամական միջոցների պակասութեան պատճառով, թողնել երկիրը։

Կասկած չը կայ, որ եթէ մեզանում համալսարան կը լինի, շատերը Ռուսաստանից էլ՝ թէ Կովկասեան բնիկներից և թէ նոյն իսկ ռուսներից, որոնք տկարութեան պատճառով չեն կարող դիմանալ հիւսիսային կլիմային, ուրախութեամբ կը տեղափոխվեն մեզ մօտ, աւելի բարեխառն կլիման վայելելու նպատակով։

Բայց մանաւանդ այն ժամանակ կարող է աջողվել Կովկասեան համալսարանը, եթէ նա կունենայ բնագիտական բաժին։ Բոլորովին ուրիշ նշանակութիւն ունի բնագիտական ֆակուլտէտը բնութեամբ հարուստ մի երկրի մէջ, քան թէ հիւսիսային աղքատ մի երկրի մէջ։ Այն ժամանակ ռուսներից շատերն էլ, որոնք կը կամենան գործնական կերպով ուսումնասիրել բնագիտութիւնը, կը նախադասեն Թիֆլիսի համալսարանը Ռուսաստանի միւս համալսարաններին։

Եւ եթէ «Кавказъ» լրագրի կարծիքով համալսարանի իրաւաբանական բաժինը, կամ իրաւաբանական մի առանձին դպրոց կարող է աջողվել Անդրկովկասում, ինչի ռուսաց լրագիրը չէ ընդունում որ նոյնքան և աւելի էլ դիւրութեամբ կարող է աջողվել մեզ մօտ բնագիտական բաժինը, կամ մի երկրագործական, վերջապէս մի տեխնիկական բարձրագոյն դպրոց։ Ի՞նչն է կարծում ռուս թերթը որ մեր երկրում շատ լաւ կարող է աջողվել և պատմական—լեզուագիտական ֆակուլտէտը....Մեր երկիրը ինչպէս բնութեան հարստութեան կողմից, այնպէս էլ հնութիւնների, արձանների, պատմական յիշատակարանների, բազմատեսակ տեղական լեզուների ու բնիկ բարբառների կողմից ներկայացնում է մեզ մի բնական հարուստ լաբորատորիա....

Շատերը մեր տեղական երիտասարդներից դրամական միջոցների պատճառով չեն գնում ռուսաց համալսարանները, շատերը աւելորդ են համարում մինչև անգամ գիմնազիաներում իրանց ուսումն աւարտելու, գիտենալով որ իրանց դրութիւնից ոչինչ ելք չունեն, ոչինչ հնար չունեն բարձրագոյն ուսմանը ձգտելու։ Իսկ եթէ մենք մեզ մօտ համալսարան կունենանք, կարելի է մեր գիմնազիաներում աւարտողների թիւն էլ կը կրկնապատկվի։

Մի և նոյն ժամանակ մենք չենք կարող չը համակրել «Кавказъ» լրագրի կողմից յայտնած և այն մտքին, թէ ցանկալի է որ մեր երկրում միջնակարգ դպրոցների թիւն էլ աւելանայ։ Իսկ դորա համար հարկաւոր է զարգացնել և ընդարձակել մեզ մօտ և տարրական ուսումնարանների սիստեման

Այդ վերջինները պէտք է ի հարկէ տեղական լեզուների հիմքի վրա կայանան։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

—

5 Նոյեմբերի

Խարկով քաղաքը Նորին պայծառափայլութեան կոմս Միքայէլ Տարիէլեան Լօրիս-Մելիքեանի գեներալ նահանգապետ Նշանակվելու օրից Նոր հոգի, Նոր կեանք ստացաւ, որովհետև տեղիս ոստիկանութիւնը սկսեց աւելի ուշադրութիւն դարձնել փողոցների, հրապարակների, տների և բակերի մաքրութեան և պատահած զանազան տեսակ անկարգութեանց վրա։ Նոյն ժամանակից սկսվեցան նորանոր փոփոխութիւններ և բարեկարգութիւններ ամենայն մասներում։ Ցիշենք այստեղ շատերից մի քանիսը։

1) Կոմսը կարգադրեց որ ամենայն բնակիչ ունենայ անցագիր (паспортъ), որով շատ կայսերական հիմնարկութիւնների գործերը տասնապատիկ բազմացան առ ժամանակ, այնպէս որ գիշեր և ցերեկ ծառայողները նստած միայն անցագիրներ էին գրում։ Կարելի է ասել բնակիչների համարեա երրորդ մասը առանց անցագրի էին բնակվում։ 2) Արանից յետոյ կայացաւ Խարկով քաղաքի օրագրութիւնը՝ որով յայտնվեցաւ սրա բնակիչների թիւը՝ որ հասնում է մինչև 111,000, հոգու։ 3) Արգելվեցաւ առանց նահանգապետի կամ ոստիկանութեան վկայականի որ և իցէ զէնք ունենալ իր հետ կամ տանը։ 4) Միջնակարգ ուսումնարանների աշակերտները որ մինչև Նորին պայծառափայլութեան կոմսի գալուստը ամեն վայել կամ անվայել տեղ ներկայ էին, այժմ բոլոր այն տեսարաններին՝ որոնք վնասում են դեռահաս աշակերտաց ուղղագրման, արգելված է նրանց ներկայութիւնը։ Իսկ նրանց համար կարգադրեց հանրապետական մեծ այգիում շաբաթը երկու անգամ հասարակաց զբօսանքներ, որտեղ զինուորական երաժիշտները զանազան ներդաշնակցութեամբ զբաղեցնում են հասարակութիւնը և զբօսանքը դարձնում են զուարճալի և դուրեկան բոլորի համար։ 5) Հրդեհների առաջն առնելու նըպատակաւ հրամայեց որ ամենայն տուն ունենայ բակում առանձին մէկ մեծ տակառ, ջուր միշտ պարաստի։ Պարտաւորեց բոլոր ջուր կրողներին որ հրդեհի ժամանակ գտնվեն անպատճառ հրդեհ պատահած տեղը և հասցնեն ջուր որի համար կը ստանան նշանակած վարձ քաղաքի Դումայից։ Արգելեց տախտակաշէն չինութիւններում դիւրավառ (легковоспламеменяющійся) իրեղէնների վաճառելը ինչպէս լուցկիների, ֆոտոգէնի, նաֆթի և այլն։ Հիմնեց հրդեհների դէմ ընկերութիւն Խարկովում, որի նպատակն է ամենայն կերպով աշխատել պակասացնել հրդեհների թիւը, պատահելու ժամանակ հասցնել ամենաշուտ կերպով հարկաւոր օգնութիւնը և հրդեհներից վնասվածներին օգնել ըստ կարողութեան և այլն և այլն։ Գլխաւոր հիմնադիր անդամն է ինքը կոմսը և յետոյ նրա ամուսին պայծառափայլ կոմսուհի Նինա Իվանովնա Լօրիս-Մելիքեանը, տեղիս ռուսաց Յուստինիանոս առաջնորդը, նահանգապետ Ֆոն-Վալը և այլ զանազան յայտնի և այստեղ մեծ նշանակութիւն ունեցող անձինքներ։ Այս ընկերութիւնը հիմնելուց յետոյ հրամայեց որ հրդեհների պատճառ եղող անձինքները ենթարկվեն զինուորական խիստ դատաստանին։ 6) Կարգադրեց որ ամենայն տուն ունենայ ոստիկանութեան կողմից առանձին ժապավենել գիրք որտեղ գրված լինեն տան մէջ բոլոր բնակողները իրանց անցագիրներով մանրամասնաբար։ Ցունը եթէ ունի վարձով տալու կամ տված սենեակներ, բոլորը պէտք է ունենան համարներ (№ №) և ըստ այնմ պէտք է տան կենողը գրված լինի տան գրքի մէջ, այնպէս է կարգադրած որ մի ոք եթէ մէկին փնտռելիս լինի կարող է հեշտութեամբ գտնել թէ փողոցը, թէ տունը և թէ կացարանը առանց բոլորին անհանգստութիւն պատճառելու տան մէջ։ 7) Բոլոր քաղաքը բաժանեց մի քանի հարիւր մաս և պարտաւորեց տանտուտերէրին որ ունենան գիշերապահ դռնապան եթէ ոչ ամեն տուն առանձին, գոնեա երեք, չորս 'ի միասին ունենան մի պահապան և և այդ պահապանը վարձած պիտի լինի ոստիկանութեան համաձայնութեամբ և եթէ մի ոք չունի ոստիկանութեան կողմից հաւատարմութիւն չէ կարող լինել գիշերապահ դռնապան։ Այսպիսով շատ պակասեցաւ անթիւ գողութիւնների և աւազակութիւնների թիւը։ 8) Քաղաքի բոլոր կառքերի տէրերին և կառավարներին պարտաւորեց որ ամեն կառք ունենայ գիշերները վառած լապտերներ և ունենայ իր համարը (№) կարմիր ձիթաներկով և մեծ թուանշաններով գրած թէ նստատեղի ետեը և թէ լապտերների վրա, իսկ ձմեռը,

---

տասարդի խոստմունքներից, իսկապէս սիրում են նրան։ Երիտասարդը տարիներով ապրում է նրա հետ, աւարտում է իր ուսումը և վերադառնում է իր հայրենիքը, իսկ սիրուհուն, որպէս մի լաթի կտոր, ձգում է մի կողմ, առանց խղճահարվելու և առանց բնաւ մտածելու, թէ ում խնամակալութեանն է թողնում իր սիրոյ պտուղները.... Գնացող ընկերոջ սիրուհին մնում է մնացողին, և այսպէս նա անցնում է ձեռքից ձեռք և երբէք չէ դուրս գալիս ուսանողների աչխարհից։

Իմ վերեվ նկարագրութիւնը դեռ բաւական աղնիւ ձևն է ուսանողների յարաբերութեան կանանց հետ։ Բայց լինում են և այնպիսի փչացած բնաւորութիւններ, որ յաճախում են և հասարակաց տները։ Մէկը այս ասպարէզի հերոսներից ինձ պատմում էր, թէ ինքը ամբողջ օրը քնում էր, իսկ գիշերը սկսում էր ամենաբարձր հասարակաց տնից, ուր կարելի էր գտնել պիանո, լաւ նախաճաշիկ և նուրբ ըմպելիքներ, և առաւօտեան վերջացնում էր այն ցած և կեղտոտ տներով, ուր բաւական էր հինգ կոպէկ միայն ծախսել։—Ի՞նչու, հարցրի ես։—Այնպէս,. այդ զուարճութիւն էր պատճառում ինձ, պատասխանեց նա։ Բայց պատահում են և այնպիսի անազնիւներ, որ գըտնում են մի պառաւ, բայց հարուստ այրի կին և ապրում են նրա հետ և նրա հաշուով։

Ուրիշ զուարճութիւններից, որ կարող էին կրթողական ազդեցութիւն ունենալ, զուրկ են հայ ուսանողները։ Թատրոն հազիւ են գնում. թատրոնով հետաքրքրվում են այն ժամանակ միայն, երբ պէտք էր տեսնել մի սիրուն պարուհի, կամ լսել մի հռչակված երգչուհու։ Կաֆէներում ժամանակ չեն անցկացնում, այլ իրանց հայկական սովորութեամբ հաւաքվում են մի ընկերոջ սենեակը, «ռանավարի» կերպով արաղ են խմում, ծխում են և թուղթ են խաղում,—արաղը և թղթախաղը, ահա գլխաւոր պարապմունքները, որ զբաղեցնում են ուսանողներին։ Այսպիսի շրջաններում, որոնք խաղալու փող չունեն, նստում են, կամ ապուշ կերպով նայում են խաղացողների գործողութեանը, և կամ մի կողմ քաշված, խօսում են, վիճում են բոլորովին իրանց անծանօթ, բոլորովին չը սովորած և չը կարդացած առարկաների վրա։ Հիւրանոց մտնում են միայն ճաշելու համար և անմիջապէս դուրս են գալիս։ Ուսանողը երբեմն ամբողջ ամիսներ ուտում է մի հիւրանոցում պարաքով. երբ պարաքը չատացաւ և անկարող էր վճարել, փոխում է հիւրանոցը, գտնում է մի նորը, ուր նրան չեն ճանաչում և նոր կրեդիտ է բաց անում։

Հայ ուսանողները առհասարակ փոքր են սովորում, ոչ թէ այն պատճառով, որ նրանցից շատ ժամանակ է խլում արաղը, թղթախաղը և սիրուհին, ոչ, այլ ընդհանրապէս ծոյլ են։ Խիստ սակաւ է այն ուսանողների թիւը, որոնք ճշտութեամբ յաճախում են դասախօսութիւններ լսելու. ոմանք գնում են շաբաթը միանգամ, ոմանք ամիսը մի անգամ, իսկ ոմանք ամենևին չեն գընում։ Մեծ մասը, համարեա 10-ից 8-ը լսում են դասախօսութիւններ իրաւաբանական և բժշկական ֆակուլտէտներում։ Մի բան, որ աւելի յատկանիշ է Ռուսաստանի մեր ուսանողներին, այն է, որ նրանց չէ հրապուրում գիտութեան սէրը, այլ ընտրում են այս և այն մասնագիտութիւնը որպէս միջոց կեանքի մէջ ասպարէզ բացելու և ապագայում իրանց համար որ և իցէ դրութիւն հաստատելու։ Աւելի պարզ ասած, նրանք սովորում են դիպլոմի համար։ Բայց դիպլոմ ստանալու համար մեծ գիտութիւն, մեծ աշխատութիւն պէտք չէ, բաւական էր տարին մի քանի անգամ դասախօսութիւններ լսել, յետոյ սերտել մի քանի տետրակներ և քննութիւն տալ։ Որպէս համբակի սերտողութեամբ լցնում է իր գլխում ուսանողը գիտութեան պաշարը այդ ողորմելի վիմագրական տետրակներից, այպէս էլ շուտով դուրս է թըռչում նրա գլխից, երբ թողնում է համալսարանը։ Բայց դիպլոմը իր զօրութիւնը չէ կորցնում։ Իմ խօսքը բժիշկների մասին չէ, որոնցից պահանջվում է մի որոշ չափով գործնական աշխատութիւններ, բայց մնացեալ մասնագիտութիւնների մէջ գլխաւորապէս գործ է կատարում յիշողութիւնը, աչակերտի սերտողութիւնը, և ոչ թէ գիտութեան իւրացնելը, կամ ուրիշ խօսքով մարսելը։ Եւ ինչով կարող էր հարստացնել ուսանողը իր մտաւոր պաշարը, երբ նա իր մասնագիտութեանը վերաբերեալ ոչ մի ուրիշ գիրք չէ կարդում, այլ ևս չեմ խօսում այն զանցառութեան վրա, որ նա հետաքրքրվէր զանազան գիտութիւններով, որոնք իր մասնագիտութեան հետ կապ չունէին։

Ռուսաստանի հայ ուսանողը ոչինչով չէ զանազանվում Ռուսաստանի հայ վաճառականից։ Երևակայեցէք ձեզ մի Թիֆլիսեցի, որ գնացել էր Մոսկվա. նա առնում է այն ապրանքները միայն, ինչ որ պէտք էր իր կրպակի համար, ինչ որ ինքը ծախում էր, ինչ որ իր վաճառականութեան մասնաբաժինն էր կազմում. բայց ուրիշ ինչ էր վաճառվում առևտրական հրապարակի վրա, որոնցից դարձեալ կարելի էր շահվել,—նրանցով չէ հետաքրքրվում։ Նոյն կերպով վարվում է և հայ ուսանողը. նա բացի իր մասնագիտութիւնից ուրիշ գիտութիւններով չէ հետաքրքրվում։ Այս է պատճառը, որ մեր ուսանողներից չեն յայտնվում զօրաւոր տաղանդներ կամ փոքր ի շատէ խոշոր գիտնականներ։ Հայ ուսանողի ամբողջ գործունէութիւնը պայմանաւորվում է մի հաշիւի մէջ, սկզբից նախագծած մի վաճառականական հաշիւի մէջ, որ հասցնում է նպատակին։ Այս հաշիւից դուրս նա ուրիշ բան չէ ճանաչում։ Գիտութեանը վերաբերվում է նա բոլորովին նրա պաշտօնական կողմից։ Նա հաշուել է, թէ բժիշկ, փաստաբան, նօտար լինելու համար պէտք է այսչափ գիտութիւն, որ կարողանայ դիպլոմ ստանալ, և այն չափից չէ անցկենում։

Ուսանող մանկտին ամեն ազգի մէջ և ամեն ժամանակներում եղել է աղատութեան սիրահար, բռնութեան թշնամի, յառաջադիմութեան առաջնորդ և լուսաւորութեան առաքեալ։ Նա պաշտպան է հանդիսացել նեղեալին և պահանջել է արդարութիւն մարդկանց յարաբերութիւնների մէջ։ Նա ցանկացել է ընդհանուր մարդկային բարին, ցանկացել է, որ մարդը ապրէր հանգիստ, գոհ, և հարստահարիչ ձեռքը չը յափշտակէր նրա օրեկան հացը։ Բայց հայ ուսանողը չափազանց եսական է. նա երբէք չէ յափշտակվում ընդհանուր մարդասիրական բարձր գաղափարներով։ Նա մինչև անգամ չէ մտածում իր ազգի վրա. այլ մտածում է իր անձի մասին միայն։ Իդէալ կոչված բանը նրա համար չը կայ. նա սաստիկ նիւթապաշտ է։

Եւ ո՞րտեղից կարող էր նա հրապուրվել բարձր գաղափարներով, երբ գրքեր չէ կարդացել, ծանօթ է մի քանի հեղինակների անունների հետ, առանց նրանց գործերի հետ ծանօթ լինելու. լրագրութեան չէ հետևում. և ամենևին չէ հետաքրքրվում, թէ ինչ է կատարվում իր շուրջը, կամ ինչ են անում զանազան ազգեր զանազան երկրներում։ Այս է պատճառը, որ հայ ուսանողի աչխարհայեցութեան շրջանակը մնում է խիստ նեղ, և նա այնքան փոքր ծանօթ է ժողովուրդների պատմութեան և նրանց կենցաղավարութեան պայմանների հետ, որ իր զարգացումով չատ չէ զանազանվում մի հասարակ գիմնազիստից։ Բայց գըտնվում են և այնպիսի խնդիրներ, որոնք գրաւվում են բուն ռուս ուսանողների մէջ բորբոքվող մի քանի նոր գաղափարներով, որպէս անմիտ թիթեռը յափշտակվում է ճրագի լոյսով և այրում է իր թեևիները....

(Կը շարունակվի)

սահնակային եղանակին ամեն կառք ունենայ բոժոժներ։

Ուրիշ շատ բարեկարգութիւններ մոցրեց պայծառափայլ կոմսը, որոց մի առ մի յիշելը այստեղ անկարելի է տեղի սակաւութեան պատճառաւ։ Մէկ խօսքով Խարկովի համարեա բոլոր բնակիչները դրաւած լինելով կոմսի զանազան տեսակ անթիւ խոհեմ և խմաստալից բարեկարգութիւններով և կարգադրութիւններով, իրանց բաղդաւոր են համարում որ սրանց վիճակվեցաւ ունենալ իրանց գեներալ նահանգապետ մեր միակ հայազգ կոմսին։

Ա.Թ. Մելքումեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ՄԵՂՐԻ գիւղից, որ այնտեղի բնակիչների մէջ սովորութիւն է դարձել օտարութիւն գնալ։ Օտար քաղաքներ գնացող երիտասարդները մի քանի ամիս պարապ թափառում են քաղաքների փողոցներում և յետոյ վերադառնում են իրանց հայրենիքը։ Դրանք մի որ և է արհեստ անգամ չեն սովորում։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ հաղորդում են, որ տեղացի երիտասարդների աշխատութեամբ բացվել էր մի մատենադարան իր ընթերցարանով, որ կարճ ժամանակամիջոցում մօտ 600 բուբլու գրքեր էր ունեցել։ Բացի այդ ընթերցարանը իւրաքանչիւր տարի ստանում էր մօտ 30 պարբերական հրատարակութիւններ։ Երբ ընթերցարանի վարչութիւնը ընկաւ տեղական աղաների ձեռքը, նոքա աւելացրին տարեկան վճարը և ընթերցարանի անդամների 150 թիւը հասաւ 70-ի։ Մի քանի ժամանակից յետոյ ընթերցարանը փակվեց և երիտասարդների աշխատութեամբ ձեռք բերված գրքերը մկների կերակուր դարձան։

—

Խնդրում ենք ներկայ տարվայ մեր բաժանորդներից նրանց, որոնք դեռ չեն վճարել «Մշակի» բաժանորդագինը, ուղարկել նրան խմբագրութեանը։ Բաժանորդագինը 11 ամիս ապառիկ թողելը մեր կարծիքով բաւական է։

—

Մեզ հաղորդում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ, որ հացի թանդութիւնը աղքատ բնակիչներին յետին թշուառութեան է հասցրել։ Կալուածատէրերից մէկը, պ. Ա. Տէր-Մկրտչեան, որ բաւական շատ ցորեն ունի հաւաքած իր կալուածներից, էժան գնով ծախում է բնակիչների վրա, միւսը, որ նոյնպէս շատ ցորեն ունի, չէ ծախում, ասելով, որ աւելի վատ ժամանակների համար է պահում։ Ագուլիսում աղքատների համար հաւաքած փող կայ։ Այդ փողով էլ ոչ ոք չէ մտածում ցորեն գնել և էժան գնով բնակիչների վրա ծախել։ Հարուստներից իւրաքանչիւրը երկու, երեք տարվայ ցորենի պաշար ունեն և այդ պատճառով չեն հոգում չունեցողների մասին։ Թղթակիցը ցանկութիւն է յայտնում, որ հարուստ ագուլեցիները շուշեցիների նման աղքատների մասին հոգային։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են, որ մահտեսի Աւետիս Համբարձումեանը, որի տունը վաճառանոցին մօտ է 1000 պուդից աւելի ցորեն ունի պահած։ Պարոնը վաճառանոցի մօտ լինակվելով եկած ցորենները գնել է և մտադիր է թանդ գներով ծախել։ Երևի պատուելի մահտեսին, ժողովուրդի տարաբաղդութիւնից օգուտ քաղելով, ցորենի թանդ գներով ծախելուց աչքատած գումարով կամենում է ծածկել այն ծախսերը, որ նա արել է Երուսաղէմ գնալու ժամանակը։ Սուրբ գերեզմանը պահապան լինի բ ա ր ե գ ո ր ծ մահտեսուն, որի նմանները Ագուլիսում շատ կան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

«TEMPS» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Նորերումս անգլիական պօլիտիկայի մէջ Կ. Պօլսում պատահած փոփոխութեան նշանակութիւնը շատ մեծացրին, ասում է «Temps» 6-ին նոյեմբերի։ Բայց և այնպէս այդ փոփոխութիւնը ուշադրութեան շատ արժանի է։ Տարակոյս չը կայ, որ Եւրոպայի աչքերը նորից պիտի ուղղվեն հայ ազգի դրութեան, շահերի և պէտքերի վրա, քանզի յանկարծ ուժգնապէս Փոքր-Ասիայի համար մի քանի բէֆօրմեր պահանջելով Բ. Դռնից, լորդ Բիկօնսֆիլդը յարուցանում է հայկական խնդիրը, գէթ այս խնդիրն է մեր մտքին նախ և առաջ ներկայացողը,—և հաւանական է, որ Գիլդհոլլ մէջ ասվելու առաջին ատենախօսութեան մէջ Հայաստանի անունը պիտի թնդայ այն ճարտասանական հնչիւն շառաչմամբ, որ Եւրոպան արդէն վաղուց 'ի վեր սովորած է լսելու տօրիական կաբինէտի պարագլխից։ Փոյթ չէ որ ծագի մի այդպիսի խնդիր, ընդհակառակն. տաճկի վատ վարչութեանը մարդ չը կայ որ համակրէ, այն ինչ հայոց ազգութեան ամենքը համակրում են։ Արդէն ստէպ և իրաւացի կերպով ափսոսված է, որ Բերլինի կոնգրէսը պարտք չը համարեց աւելի մեծ բան անել այս այնչափ աշխատասէր, այնչափ խելացի, յառաջադիմութեան այնչափ ընդունակ ազգի համար։ Սակայն ներելի է երկնչել, որ հայկական խնդիրը այս րոպէիս Բիկօնսֆիլդից յարուցվելով բաւականին վատ շանսեր չունենայ և լոկ եւրոպական դժուարութիւնների և կնճիռների մի նոր նիւթ չը դառնայ։ Դեռ չէ հնչել այն ժամը որ կարելի լինէր մի վերջնական վճիռ տալ արևելեան խնդրին, անշահասէր քաջալերութիւն և անսպասման օգնութիւն հասցնելով այն ազգերին, որք իրաւամբ կոչված են տաճկի կայսրութեան ժառանգութիւնն ընդունելու։ Այսպէս լինելու փոխարէն մենք տեսնում ենք իրարու հակառակ դիւանագիտութիւններ, որք մարընչում են իրարու հետ այս ազգերի օգնութեամբ, կամ պաշտպանելով կամ թողնելով սրանց շահերը, նայելով բոպէական պէտքերին կամ կուլի փոփոխական բախտին, ուր իւրաքանչիւրը մտածում է միայն ամրանալ ոսոխի դէմ և կամ նրան անտես հարուածներ տալ։

«Մի հեռագիր արդէն ծանուցանում է, որ սըր Լէյարդը պահանջել է Բ. Դռնից մի անգլիացու, Բեկկեր փաշային, կուսակալ նշանակել Երզրումի նահանգում, և թէ Բ. Դուռը յիրաւի հակամիտ է ընդունել այս օտարազգի պաշտօնատարին, բայց ոչ իբրև կուսակալ, այլ իբրև ժանդարմերիի հրամանատար Հայաստանի մէջ։ Երզրումի նահանգը այժմ քիւրդերի ապստամբութեամբ աղմկված է։ Այդ գաւառը սահմանակից է ռուսաց Հայաստանին և հաւանական է, որ Ռուսաստանը չը պիտի կարենայ անտարբեր աչքով տեսնել անգլիական ազդեցութեան հաստատվելը իր փոքրասիական սահմանից երկու քայլ հեռու այսպիսի ճգնական հանգամանքներում։ Այս պետութիւնը մէկ միլլիոնից աւելի հայեր կառավարելով, կարող է իրաւացի հիմքեր ունենալ կասկածի ենթարկելու այն շարժառիթները, որք յանկարծ դրդել են լորդ Բիկօնսֆիլդին իր ձեռքն առնել հայերի դատը։ Ցիշատակենք նաև մի հեռագիր Թիֆլիսից, որ այս խնդիրների հետ կապ ունի։ Ռուս զօրավարն Ֆրանկինի, որ վերջին պատերազմից յետոյ Կարսի նահանգապետ կարգված էր, մի տարադէպ միտք էր ունեցել յանկարծ, մի չնչին պատճառով, փակելու այդ քաղաքի հայոց վարժարանները։ Այդ մինն էր այն կամայական միջոցներից որ սովոր էին գործածել հին դպրոցի պաշտօնատարները։ և ռուսաց լրագիրները, որք կրիտիկայի իրաւունքը առաւել են վայելում, քան որ կարծվում է, զանց չարին բարձրաձայն պարսաւելու այդ անպատեհութիւնը։ Մեծ էր հայերի դժգոհութիւնը Կարսից սկսեալ մինչև Երևան և Էջմիածնից մինչև Թիֆլիս։ Սակայն մեր յիշած հեռագիրը յայտնում է, որ հայ վարժարանների բացումը հրամայված է և թէ գեներալ Ֆրանկինին մի քանի ամսվայ արձակուրդ է ստացել.....

«Ռուսաստանի և Անգլիայի փոխադարձ դրութիւնը Փոքր-Ասիայի մէջ կատարելու բէֆօրմների նկատմամբ աւելի լաւ հասկանալի կը լինի, թէ որ մենք յառաջ բերենք անգլօթիւրքական պայմանագրութեան նոյն իսկ օրինակը և Բերլինի դաշնագրութեան 61. յօդուածը։ Անգլիայի և Թիւրքիայի մէջ 4-ին յունիսի 1878 ամի ծածուկ ստորագրած պայմանագիրը, որ յայտնի եղաւ կօնգրէսից յետոյ, միայն երկու յօդուած ունէր. մենք կարող ենք ամբողջապէս յառաջ բերել առաջինը, որ և գլխաւորն է։

«Եթէ պատահի որ Բաթումը, Արդահանը, Կարսը կամ այս տեղերից մինը Ռուսաստանի ձեռքում մնայ և Ռուսաստանը երբ և իցէ մի փորձ փորձէ գրաւելու մի որ և է ուրիշ մասն նորին մեծութեան Սուլթանի երկիրներից Ասիայում, որք որոշված են հաշտութեան վերջնական դաշնագրով, Անգլիան պարտաւորվում է միանալ նորին մեծութեան սուլթանի հետ զինու զօրութեամբ յիշեալ երկիրները պաշտպանելու համար։—Դրա փոխարէն Ն. Մ. Սուլթանը խոստանում է Անգլիային մոցնել անհրաժեշտ բէֆօրմներ (որք յետոյ սահմանվելու են երկու տէրութիւններից) նոյն երկիրների մէջ բնակող Բ. Դրան քրիստոնեայ և այլ հպատակների բարեկարգ վարչութեան և հովանաւորութեան նպատակով. և որպէս զի Անգլիան իր յանձնառութիւնը կատարելու համար կարևոր միջոցներ ունենայ, նորին կայսերական մեծութիւնը յօժարվում է, բացի այնմանէ, յանձնել Անգլիային, որ սա գրաւէ և կառավարէ Կիպրոս կղզին։»

«Այդ պայմանագրութեամբ Բ. Դուռը պարտաւորվում է, առանձինն Անգլիայի առջև, որոշեալ բէֆօրմներ մոցնել Փոքր-Ասիայի, ուրեմն և Հայաստանի մէջ։ Բացի այս Բերլինի մէջ յուլիսի 13-ին ստորագրած դաշնագրութեան 61. յօդուածով նա պարտաւորվում էր բոլոր տէրութիւնների առջև բէֆօրմներ մոցնել Հայաստանի մէջ։ Աւասիկ այդ յօդուածը։

«Բարձրագոյն Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել հայաբնակ գաւառների տեղական պէտքերին անհրաժեշտ բէֆօրմները և երաշխաւորել նրանց ապահովութիւնը Չերքեզների և Քիւրդերի դէմ։ Բ. Դուռը այս նպատակով 'ի կեր առած միջոցների մասին պարբերաբար տեղեկութիւն կը տայ պետութիւններին, որք կը հսկեն նրանց գործադրութեան վրա։»

«Այս երկու բնագիրների համեմատութիւնը մեր կարծիքով բաւականին լոյս է սփռում այն ինիցիատիվի սահմանների և վտանգների վրա, որ իր վրա է առնում այս րոպէիս անգլիական կառավարութիւնը 4 յուլիսի 1878 թ. պայմանագրութեան մէջ նշանակված բէֆօրմների իրագործութիւնը յառաջացնելու մտքով։ Բ. Դուռը հաշատու է Անգլիացին Փոքր-Ասիական բէֆօրմների նկատմամբ. բայց մի և նոյն ժամանակ նա պարտական է հաշիւ տալ բոլոր պետութիւններին Հայաստանի մէջ ներածվելու բէֆօրմների համար։ Բոլոր պետութիւնները հաւասար իրաւունք ունեն հսկելու այս երկրի մէջ մտնվելու բէֆօրմների վրա։ Սիրիայում և ուրիշ տեղերում Անգլիայի ձեռքերը արձակ են. սակայն Էրզրումի նահանգում և միւս հայաբնակ երկիրների մէջ Ռուսաստանը, Բերլինի դաշնագրութեան 61. յօդուածը ձեռքում բռնած, կարող է յետ կանգնեցնել նրան (arrêter) և պահանջել իր մասը ազդեցութեան մէջ։ Այս երկու պետութիւնների ոսոխութիւնը ամենքին քաջ յայտնի լինելով, աւելորդ ենք համարում երկարաբանել սրա հետևանքների վրա։ Ինչ և իցէ դժուար թէ լորդ Բիկօնսֆիլդը կարենայ մէնակ կարգի ձգել հայերի վիճակը։»

Փ. Վ.

—

ԻՏԱԼԻԱ

—

Օտարերկրեայ և իտալական համալսարաններից բազմաթիւ ներկայացուցիչներ ներկայ գտնվեցան Գալվանի յիշատակին կանգնած արձանի օծման հանդիսին։

Նոյեմբերի 10-ին գիշերը այրվեցան Ֆլորէնցիայի թագաւորական ախոռները. հրդեհը յառաջացել է մերձակայ տան ծխնելոյզի բոցից։

«Voce della Verita» լրագիրն ասում է, որ Պօրտուգալիայի առաջադէմների ընտրութիւնների յաղթանակը չի վնասի Պօրտուգալիայի և Վատիկանի մէջ եղած բարեկամական յարաբերութիւններին. բացի այս, կղերական թերթը հաւատացնում է, որ Պօրտուգալական եկեղեցու շահերը նոր ընտրութիւնների առաջ միշտ անվտանգ կը մնան։

—

ԱՄԷՐԻԿԱ

—

Այս օրերս Փարիզում գտնվող չիլիական պատգամաւորութիւնը մի պաշտօնական հեռագիր ստացաւ իրան հայրենիքից, որը հաղորդում է, թէ չիլիական բանակը մի յաղթութիւն արաւ Պէրուի Պիզագուա քաղաքում։

Այս մի և նոյն յաղթութեան վերաբերութեամբ «Agence Havas» էլ մի ուրիշ հեռագիր է ստացել իր ամէրիկական գործակատարներից, որոնք հաղորդում են, թէ չիլիական զօրքերը իջան Պէրուի ցամաքը, և չը նայելով թշնամի բանակի յամառ ընդդիմադրութեանը, վերջապէս յաջողացրին տիրել Պիզագուա քաղաքը։

Չիլիացիք խոստովանում են, որ սպանուածներով և վիրաւորվածներով նրանք հինգ հարիւր մարդ կորցրին։

Այս քաղաքի առումից յետոյ պէրուական զօրքերն բոլորովին իրանց յոյսերը կտրել են Իկվիկը պաշտպանելու, որովհետև Պիզագուայի թշնամի չիլիացիներն, օգուտ քաղելով այդ քաղաքի յաջող դիրքից, կտրել են Արիկայի և Իկվիկի զօրքերի յարաբերութիւնները, և այսպիսով անդամալոյծ են արել Արիկայի զօրքերի ոյժը Իկվիկը պաշտպանելու։

—

ԶԷՐՆՕԳՕՐԻԱ

—

Բօլգարական իշխանի թիկնապահ մայոր Լուվիեվ հասաւ Ցէտինիէ և իշխան Ալէքսանդրի սեփական ձեռքով գրած մի նամակ յանձնեց իշխան Նիկողայոսին։ Նամակի մէջ բօլգարական իշխանը խոստանում է, որ եկող գարնանը կը գնայ Ցէտինիէ, և Զէրնօգօրիան իշխանին այցելութիւն կանէ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրբաթ, նոյեմբերի 16-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան դահլիճի մէջ պ. Վ. Դ. Պավլով յօգուտ կենդանիների հովանաւորութեան ընկերութեան կը կարդայ մի դասախօսութիւն «Մարդու բարոյական վերաբերումն դէպի կենդանիները բիբլիական տեսակէտից» վերնագրով։ Մուտքը 20 կ. արժէ։ Տոմսակները վաղօրոք կարելի է գնել Ջանջուղազեան եղբայրների խանութներում, որոնք գտնվում են Մերիմանովի և Մուխրանսկու տներում, Մանվելովի խանութում, Բուչկուեվի տանը և Կելբերի խանութում, իսկ ընթերցանութեան երեկոյն Գուսայի դահլիճի մուտքի մօտ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ «ԻՇԽԱՆ ԻՎԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ԲԱԳՐԱՏԻՈՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿԻ ԵՒ ԸՆԿ.»

Իշխան Իվան Կոնստանտինովիչ Բագրատիոն-Մուխրանսկի յայտնում է, որ իր հիմնած Առեւտրական տան բացումն և գործողութիւնները կը սկսվեն ներկայ տարվայ նոյեմբերի 1-ից։ Առեւտրական տան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գտնվում է Թիֆլիսում, Ռուսկի բազար հրապարակի վրա ՏՈՒՆ № 10

4—4

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրաւիրում է ցանկացողներին ընդունել 1) ժամանակաւոր առեւտրական բնակարանների շինութիւնը Կախետինսկայա հրապարակի վրա, Հաւլաբար և Ռուսաց փողոցի վրա, 2) Սապէօրնայա և Մալայա Վօդովոզնայա փողոցների վրա գտնված քաղաքային տան շինութեան փոփոխելը և լրացնելը, ներկայ գտնվել աճրդախօսութեանը, որ լինելու է քաղաքային վարչութեան մէջ հինգշաբթի նոյեմբերի 15-ին առաւօտեան 12 ժամին։ Աճուրդը կը լինի բերանացի և վերջնական առանց կրկնաճուրդի։ Թոյլ է տրվում նոյնպէս ներկայացնել ծածկված յայտարարութիւններ։ Աճուրդը կարող է լինել թէ երկու գործերի համար միասին և թէ իւրաքանչիւրը առանձին։ Պայմանների և նախագծերի հետ կարելի է ծանօթանալ վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը, բացի տօներից։

3—3

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

ՄԵԾԱԴԻՐ ԵՒ ՓՈՔՐԱԴԻՐ

ՕՐԱՑՈՅՑՔ

1880 թ.

Հանդերձ չորս նոր հետաքրքրական պատկերներով

և

Ծաղիկ Ընտանեաց ե. տ. յաւելուածով։ Որովհետև մենք արդէն բացեցինք Երևանում սեփական տպարան, ուստի մեր ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ կը լինեն պատրաստ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ մէջ։

Գումարով գնողաց զիջումն կը լինի։ Մեր տպարանում ընդունվում են չափաւոր գներով ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ։

Մեր հասցէն՝ въ Эривань
А. Гуламирянцу. Արգար Գուլամիրեանց

4—5

ОБЪ ИЗДАНІИ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

въ 1880 году.

Съ 1-го ноября будущаго 1880 года **„Тифлисскій Вѣстникъ“** будетъ издаваться **ЕЖЕДНЕВНО, не исключая** ни понедѣльниковъ, ни послѣпраздничныхъ дней, при участіи нынѣшняго состава Редакціи.

Вслѣдствіе увеличенія числа номеровъ газеты, подписная цѣна на газету нѣсколько измѣняется. Годовая подписка назначается: въ Тифлисѣ (съ доставкою на домъ)—12, съ пересылкою по Имперіи—13, съ пересылкою по почтовому союзу—18 руб.

СРОКИ.	Въ Тифлисѣ съ доставкой.		По Импери.		По почтовому союзу.	
	рубли.	коп.	рубли.	коп.	рубли.	коп.
На 12 мѣсяцевъ	12	—	13	—	18	—
„ 6 „	6	50	7	—	9	50
„ 4 мѣсяца	4	50	5	—	7	—
„ 3 „	4	—	4	50	5	50
„ 1 мѣсяцъ	1	50	2	—	2	50

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ, въ редакцію **„Тифлисскаго Вѣстника“**.

Въ Тифлисѣ подписка принимается, кромѣ конторы газеты (Эриванская площадь, д. № 3), въ газетномъ агентствѣ Шавердова.

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1880 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ, БЕЗЦЕНЗУРНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ И ОБЩЕСТВЕННУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

Газета будетъ выходить ежедневно, въ форматѣ нашихъ большихъ газетъ, по слѣдующей програмѣ: постановленія и распоряженія правительства; телеграммы, обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе вопросовъ дня; военныя извѣстія; мнѣнія русской и иностранной печати по данному вопросу и сущность руководящихъ статей; иностранныя извѣстія по русскимъ и заграничнымъ источникамъ; извѣстія изъ славянскихъ земель. Жизнь Россіи: наши домашнія дѣла; корреспонденціи; народное образованіе; внутреннія извѣстія; хроника; хроника научная, литературная и художественная: театральныя и музыкальныя извѣстія; судебная хроника. Историческій листокъ; разныя извѣстія; биржевыя, желѣзно-дорожныя, торговыя и др. свѣдѣнія; справочныя извѣстія.

Подписная цѣна съ пересылкой и доставкой въ Москвѣ и на города:

На годъ	6 руб.
„ полгода	4 „
„ 3 мѣсяца	3 „
„ 1 мѣсяцъ	1 „

За границу плата вдвое.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ Москвѣ, въ конторѣ редакціи газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ,“ Столешниковъ пер., д. Рожнова; въ конторѣ изданія газеты—у Москворѣцкаго моста, въ д. **Н. П. Ланина**, въ его конторѣ, и у всѣхъ извѣстнихъ книгопродавцевъ Москвы; въ С.—Петербургѣ—въ книжномъ магазинѣ Исакова и картографическомъ заведеніи Ильина.

Гг. иногородные благоволятъ адресовать свои требованія исключительно въ контору изданія газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“—Москва, Москворѣцкій мостъ, домъ Ланина, при его конторѣ.

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15 — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՅ

(Նոյեմբերի 14-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօչովիմկերիալը)	8	5
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1470	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիդրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% վիդրիչնի »	230	—
Մարսելի կուրսը 270—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա	9	55
Վենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դարբեժի բարաթը . . .	4	85
Առեւտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօշկու . . .	7	40
» միւս տեսակը . .	7	15
» չաքար աւազը . .	5	30
» տրանզիտը . . .	5	30
» մաքսը վճառած .	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից . . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	40
Բուրդը թուշի. . . .	7	50
» թարաքամի . .	4	—
Ալիւրը Շորագալու . .	2	20
» Երևանի . . .	—	—
Գարին	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ. .	180	—
Կախետունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մօկօի	26	—
« լիւանի . . .	22	—
« Մանտինիյան . .	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները .	1	
Ռուսաստան . . .	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա. . . .	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ։	երեկոյեան.
Թիֆլիսից .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո. .	1. 29	11. 59
Ռիօն. . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ։
Փօթիից. . .	9. 13
Ռիօն. . . .	12. 13
Միխայլովո . .	5. 39
Գօրի . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

		1. 37
		4. 8
		7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ. .	90	68	38
Գօրի . . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ. .	5. 22	3. 92	2. 18
Ռիօն . . .	9.	6. 75	3. 75
Փօթի. . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկիւչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ. .	7
Ամերիկա	7
Պարսկաստան . . .	7
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս . . .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.։

Երեքշաբթի. Մինկեվիչ վիրաբուժական հ., Ռեյխ աչքի հ., Վերմիշեվ ներքին հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ., Բաբով կրծքի և ներքին հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրով կանանց հ.։

Հինգշաբթի. Վերմիշեվ և Բուդկովսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և միզային գործարանների հ., Ժուրավլեվ ջղային հ.։ Բաբով կրծքի և ներքին հ.։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վեներական և կաշու հ.։

Շաբաթ. Վերմիշեվ ներքին հ., Ռեյխ աչքի հ., Ժուրավլեվ վեներական և կաշու հ.։

Օքրէխա, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. ***. Զարժէ այդպիսի երկար նամակ տպել մի վատ անձնաւորութեան մասին, որի վրա ուշադրութեան դարձնելը նրան մեծ պատիւ կը բերէր։

—ԹԻՖԼԻՍ. Գ. Տ. Շարունակեցէք մեզ հաղորդել տեղեկութիւններ, որոնք մի ժամանակ հարկաւոր կը լինեն։ Նամակը չենք տպի, բայց կը պահենք խմբագրատանը։

—ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ. Ե. Նամակից լուր քաղեցինք։ Կատարեցինք ձեր յանձնարարութիւնը։ Գիրքը կը ստանաք, երբ նա դուրս կը գայ մամուլի տակից։

—ԹԻՖԼԻՍ. Գօգիլա. Նիւթերի շատութեան պատճառով ձեր յօդուածը քահանաների մասին դեռ ևս չենք կարող տպել։ Կը տպենք երբ ազատ տեղ կունենանք։

Дозволено Цензурою 14 Ноября 1879 г. Тифлисъ.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի

Типографія А. А. Михельсона